

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԽԼԴԱԹՅԱՆԻ 20014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի հյուրեր, ավագանու անդամներ, համագյուղացիներ.

2014 թվականի ընթացքում Տարոնիկ համայնքում իրականացվել են աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են եղել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը և համայնքի բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը:

2014 թվականի ընթացքում Տարոնիկի գյուղապետարանը իրականացնելով Հայաստանի Հանրապետության կառավարության, Արմավիրի մարզպետարանի, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից ընդունած որոշումները զգալի աշխատանքներ է իրականացրել համայնքի առջև դրված խնդիրների բարեհաջող լուծման համար: Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման հարցերը: Համայնքի փողոցներում ամենօրյա գրաֆիկով կազմակերպվում է աղբահանություն պահպանելով համայնքի սանիտարահիգիենիկ նորմերը: 2014 թվականի ընթացքում կազմակերպվել և անցկացվել են Բանակի տոնին, Մարտի 8-ին և Եղեռնին նվիրված միջոցառումներ:

Մարտի 8-ի կապակցությամբ գյուղապետարանի, դպրոցի և մանկապարտեզի բոլոր կին աշխատողներին հանձնվել են նվերներ և ծաղկեփնջեր:

Բոլորիս համար ավանդույթ դարձած վերջին զանգի առթիվ ինչպես անցած տարիների ընթացքում ,այնպես էլ այս տարի մեր շրջանավարտները և ուսուցիչները եղան գյուղապետարանի ուշադրության կենտրոնում՝ նրանց համար կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ ավարտական երեկո , էքսկուրսիա Հայաստանի տեսարժան վայրեր: Հունիսի 1-ին Երեխաների Պաշտպանության Միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում համայնքի բոլոր փոքր երեխաների մասնակցությամբ:

- Համայնքի ղեկավարի մոտ կազմակերպվում է ամենօրյա ընդունելություն:
- 20014թվականի ընթացքում համայնքի ավագանու կողմից կայացել է թվով ութը նիստ, որոնց որոշումները հաստատվել են առանց առարկումների:
- Ընդունվել է համայնքի ղեկավարի 41 որոշում և արձակվել է 15 կարգադրություն:

- Համայնքի բնակչությանը գյուղապետարանի կողմից տրամադրվել է թվով 695 բազմաբնույթ տեղեկանքներ:
- Ստացվել է 131 պաշտոնական գրություն, որոնք քննարկվել են և պատասխանվել ըստ կարգի:
- Գյուղապետարանից ուղարկվել է 163 պաշտոնական գրություն:
- Ստացվել է 52 դիմում, որոնք քննարկվել են և ստացել համապատասխան լուծում:
- Պարբերաբար կազմակերպվում է համայնքի հանրային սննդի և առևտրային կետերում ստուգումներ, որոնք համապատասխան եզրակացություններով, կից գրությունով ամեն եռամսյակ ուղղարկվում է մարզպետարան:
- Համայնքի ղեկավարին է դիմել համայնքի բնակչության մեծ մասը տարբեր կենցաղ կոնունալ հարցերով և ստացել բավարար պատասխաններ իրենց հուզող հարցերի շուրջ:
- Գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 17 անձից որոնցից ութը համայնքային ծառայողներ են, մեկը համայնքի ղեկավարի տեղակալ, պայմանագրային և տեխնիկական աշխատողներ:
- Գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզը 2014թ. չի գործում շենքի վթարային լինելու պատճառով:
- Համայնքը ունի գրադարան 4290 կտոր գրականությանը, որից օգտվում են 700 ընթերցողներ:

Ֆինանսական բաժին – 2014 թվականի ընթացքում վճարվել է 16687,8 հզ դրամ աշխատավարձ:

Համայնքի առավել անապահով բնակիչներին տրամադրվել է սոց. օգնություն 2950.0 հզ դրամ: Սպորտ և երիտասարդական ծրագրեր հողվածից ծախսվել է 3499,8 հզ դրամ:

Կատարվել են այլ ծախսեր ապարատի պահպանման, ապրանքների գնման և ծառայությունների ձեռք բերման համար 23779,6 հզ դրամի չափով:

2014թվականի համար հողի հարկը նախատեսվել է 6250,0, հզ դրամ որից հավաքագրվել 8954,5 հզ դրամ 133.2 %, գույքահարկը նախատեսվել է 4720.0, հզ դրամ որից հավաքագրվել է 4677,1 հզ դրամ՝ 99,1 % , վարձակալական հողի հարկը նախատեսվել է 200.0 հզ դրամ որից հավաքագրվել է 27.7 հզ դրամ դրամ՝ 14 %: Ավարտվել են այրված կուլտուրայի տան առավել պահպանված երկու սենյակների մեկի վերանորոգման աշխատանքները: Կատարվել է

գյուղապետարանի շենքի ջեռուցման հին համակարգի ապամոնտաժում և նոր ջեռուցման համակարգի անցկացում , տարվում են աշխատանքներ գյուղապետարանի շենքի վերանորոգումը ավարտելու համար: